Բացի այդ, Իրանը ուղղակի և անուղղակի ներգրավված է այսօր Սիրիայում, Իրաքում, Լիբանանում, Եմենում, Բահրեյնում, Գազայում հակամարտություններում: Իրանցի շատ քաղաքացիների համար այդ հակամարտություններին Իրանի մասնակցությունը և կատարվող հսկայական ծախսերը անհիմն են թվում: Եթե ավելացնենք նաև վերջին շրջանի բազմաթիվ կոռուպցիոն սկանդալները, որոնցում ներգրավված են իրանցի պաշտոնյաները, ապա կարելի է որոշակի գաղափար ստանալ դժգոհության պատճառների մասին: Նշենք, որ այս դժգոհությունները ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլ նաև քաղաքական ենթատեքստ ունեին, որոնք շատ հնարավոր է, որ ուղղորդվում էին արտերկրի հատուկ ծառայությունների կողմից:

Ամեն դեպքում Թրամփի կողմից Իրանի հետ միջուկային գործարքի չեղարկման սպառնալիքները, հնարավոր նոր պատժամիջոցները ենթադրում են նավթի եկամուտների կրճատում: Ինչպես նաև Սիրիայում, Իրաքում և Մերձավոր Արևելքի մյուս երկրներում լայն թափ հավաքող կոնֆլիկտները ենթադրում է Իրանի կողմից ռազմական ծախսերի ավելացում և հավանաբար մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացում, որի արդյունքում սոցիալ-տնտեսական խնդիրների հրատապությունը դեռևս օրակարգում կմնա:

Թուրքիա: Թուրքայի տնտեսությունը նախորդ տարի, հատկապես երկրորդ կիսամյակում բարձր աճ գրանցեց: ՀՆԱ-ի աճը 2017թ.-ին կազմել է 7,4%, իսկ համախառն ներքին արդյունքը կազմել է 858 միլիարդ դոլար, իսկ 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 14071 դոլար: Այս պահի դրությամբ 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը կազմում է 4,09 լիրա, որն իր հերթին 2017թ.-ի ընթացքում 2,9 լիրայից հասել էր 3,8 լիրայի: Պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2015 թ.-ի 42,3% ցուցանիշից հասել է 28,3%-ի

2017թ.-ին: Սակայն շատ բարձր է մասնավոր հատվածի պարտքի տեսակակար կշիռը ՀՆԱ-ում:

Ռազմական չհաջողված հեղաշրջումը 2016 թ.-ին արգելակեց տնտեսական աճը, սակայն այն չեզոքացվեց կառավարության կողմից իրական սեկտորի աջակցությամբ և երկրորդ կիսամյակին նորից աճ նկատվեց: Աճ գրանցեցին տեղեկատվական-հեռահաղորդակցության սեկտորը, ֆինանսական և ապահովագրական ոլորտը, շինարարական ոլորտը, ինչպես նաև արդյունաբերական սեկտորը: Փոքր և միջին բիզնեսին աջակցությունը կտրուկ նպաստեց արտադրության աճին:

Թուրքիայի տնտեսության այս աճը պայմանավորված է եղել սպառման, ներդրումների և արտահանման ծավալների աճով: 123 մլրդ դոլար է կազմել օտարերկրյա ուղղակի ներդրումները, որը 2016 թ.-ի համեմատ աճել է: Իսկ տնային տնտեսությունների կողմից 6,1% ավելացվել է սպառումը: Սակայն աճի հիմնական աղբյուրը եղել է արտահանումը, որը ակտիվացել էր թույլ լիրայի հաշվին: Տնտեսական աճը պայմանավորված է եղել նաև կառավարության կողմից բիզնեսին ուժեղ աջակցությամբ և հարկերի իջեցումից: Վարկերը տնտեսության մեջ շատանում են, որոնք զգալի էժանացել են: Կարճաժամկետ հեռանկարները կարծես թե խոստումնալից են, ի հակադրություն գնաճային ճնշումների և վատթարացող ընթացիկ հաշվի: Սակայն Թուրքիայի իշխանությունները հավակնոտ հայտարարություններ են անում նաև գնաճի կարգավորման, բյուջեի դեֆիցիտի և գործազրկության նվազեցնելու ուղղություններով:

Արտահանում: Տնտեսական ակտիվության խթանման համար պետության կողմից շեշտը դրվեց ավելի շատ արտահանման վրա, քան

ներքին սպառման խթանման վրա: Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը կազմել է 76,8 մլրդ. դոլար, որտեղ արտահանումը կազմել է 157 մլրդ. դոլար, իսկ ներմուծումը՝ 233,8 մլրդ. դոլար: Արտահանումը աճել է 10%-ով: Արտահանման աճին զգալի աջակցություն տվեց «Վարկերի երաշխավորման հիմնադրամը»: Այս հիմնադրամի կողմից արտահանման ոլորտին ուղղվեցին մեծ ծավալի վարկեր: Արտահանման կառուցվածքում ամենամեծ մասնաբաժին ունեցել է ավտոմոբիլների արտահանումը: Անցյալ տարի թուրքական ավտոմոբիլային արդյունաբերությունը արտադրել էր ավելի քան 1,54 մլն. ավտոմեքենա, այդ թվում՝ Renault, Peugeot և Toyota: Նրանց 75%-ը արտահանվել է եվրոպական երկրներ: Այս տարի Թուրքիան ակնկալում է արտահանման ավելի լավ արդյունքներ:

Զբոսաշրջություն: Քանի որ անվտանգության խնդիրները բարելավվում են, եվրոպացիները (հատկապես բրիտանացիները) կրկին հետ են վերադառնում Թուրքիայի հարավային ափերը: Զբոսաշրջիկների թիվը ավելացել է նաև հատկապես ռուս զբոսաշրջիկների հաշվին, մոտ 5 մլն. տուրիստ: Այն լրացուցիչ արտարժույթ ներարկեց թուրքական տնտեսություն, որը կազմել է մոտ 4,5 մլրդ. դոլար:

Գնաճը նախորդ տարի բարձր է եղել, տարեկան միջին գնաճը կազմել է՝ 10,23%: Գնաճի պատճառ են եղել նավթի գների աճը և լիրայի հերթական դեվալվացիան: Գնաճի տեմպերը ակտիվացել էին 2016թ.-ի կեսերից՝ ձախողված հեղաշրջումից հետո: Հատկապես սննդամթերքի գներն են թանկանում, թեև լիրայի արժեզրկումը խթանում է տուրիզմին: Բնակչությունը ընկել է ինֆլացիոն-դեվալվացիոն պարույրի մեջ:

Թուրքիայի կենտրոնական բանկը ճիշտ է համարում բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքները, որպեսզի գնաճի ցուցանիշը ավելի կայուն լինի: Սակայն Թուրքիայի նախագահ էրդողանը դեմ է հանդես գալիս ԿԲ-ի տոկոսադրույքի բարձրացման քաղաքականությանը, այն բնորոշելով դավաճանություն և կարծիք հայտնելով, որ գնաճը չի կարող նվազել բարձր բանկային տոկոսադրույքներով: Վերաֆինանսավորման տոկոսադրույքը 8% է:

Գործազրկություն: Զբաղվածությունը լուրջ խնդիր է Թուրքիայում՝ գործազրկության մակարդակը մոտ 10,9% է: Կառավարությունն ակտիվորեն միջոցներ է ձեռնարկում գործազրկության դեմ պայքարելու համար: Գործազրկության մեծ մասը երիտասարդության շրջանում է: Վիճակագրության համաձայն, ամեն հինգերորդ երիտասարդը ներկայումս գործազուրկ է: էրդողանը նշել է, որ կառավարությունը ձգտում է ավելի շատ աշխատողներ վերապատրաստել վերականգնվող էներգետիկայի և ՏՏ ոլորտի համար: Բացի այդ, տվյալ միջոցառումները կնպաստեն կանանց շրջանում զբաղվածության աճին:

Պետությունը ավելացնում է նաև պետական ծախսերը և այդ ծախսերի զգալի մասը ընկնում է ենթակառուցվածքային մեգանախագծերի և բնակարանային սեկտորի շինարարության վրա, արդյունքում ստեղծվել են տասնյակ հազարավոր աշխատատեղեր:

Անշարժ գույքի նկատմամբ պահանջարկը Թուրքիայում աճում է: Ստամբուլը շարունակում է առաջատար դիրք զբաղեցնել օտարերկրացիների կողմից Թուրքիայում բնակարան ձեռք բերելու վայրերի շարքում, այնուհետև հաջորդում են Անթալիան և Բուրսան: Անշարժ գույքի գնորդների շրջանում առաջին տեղում զբաղեցնում են

Իրաքի քաղաքացիները, որոնց հաջորդում են Սաուդյան Արաբիան, Քուվեյթը և Ռուսաստանը:

Ներդրումներ: Կարճաժամկետ ներդրումները, որոնք հաճախ կոչվում են «տաք փողեր», նպաստել են 2017թ.-ին տնտեսական աճին և ակնկալվում է, որ ներդրումների հոսքը կշարունակվի այս տարի: Ներդրումների աճը պայմանավորված էր ժամանակավոր գործոններով, ինչպիսիք են Մերձավոր Արևելքի հակամարտությունները, որի արդյունքում արաբական երկրներից ներդրումները հոսեցին տարածաշրջանի համեմատաբար անվտանգ տարածքը՝ Թուրքիա:

Եվ այսպես Թուրքիայի հիմնախնդիրներից է բյուջեի դեֆիցիտը, որը կազմել է նախորդ տարի 41,9 մլրդ. դոլար, իսկ 2016թ.-ին այն կազմել էր 33,7 մլրդ. դոլար: Այն աճում է պետական ծախսերի ավելացման հաշվին, որն ուղղված է տնտեսության խթանմանը, ինչպես նաև ներմուծումից կախվածության արդյունք է:

Սակայն Թուրքիայի տնտեսության վերելքին թերհավատությամբ են մոտենում որոշ թուրք և միջազգային փորձագետներ՝ դա բնորոշելով որպես էրդողանի կառավարության հերթական բլեֆ կամ ագրեսիվ քարոզչություն: Քանի որ այդքան տնտեսական աճ ունենալու դեպքում սովորաբար ազգային արժույթը չի արժեզրկվում, որովհետև տնտեսության աճը բերում է զբաղվածության աճի, սպառման և պահանջարկի աճի: Թուրքական տնտեսությունը ոչ թե բուռն աճի, այլ անցումային փուլում է, կարծում են նրանք: Իսկ այդ ակտիվացումը դեռևս բեկումնային չէ: Միջազգային վարկանիշային կազմակերպությունների գնահատականը հիմնականում բացասական են թուրքական տնտեսության վերաբերյալ:

Միաժամանակ քաղաքական դաշտի անկայունությունը, Թուրքիայի ռազմական ներգրավվածությունը Սիրիայում և Իրաքում տեղի ունեցող հակամարտություններին, քրդական խնդիրը, դիվանագիտական լարվածությունը ԱՄՆ-ի, Իսրայելի և ԵՄ որոշ երկրների հետ, թուրքական պետությանը դրել են միջազգային մեկուսացման մեջ: Ընթացիկ տարում, այս ամենը կրկին լուրջ ազդեցություն է ունենալու Թուրքիայի տնտեսական անվտանգության և մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

Ստորև ներկայացված է Հայաստանի և հարևան երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2017թ.-ի դրությամբ, որտեղ Հայաստանի, Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի համար տրված են այդ երկրների ազգային վիճակագրական ծառայությունների և կենտրոնական բանկերի վիճակագրական ցուցանիշները, իսկ Իրանի դեպքում հիմնականում www.tradingeconomics.com և Իրանի ԿԲ-ի ցուցանիշները:

երկիր	ՀՆԱ	ՀՆԱ-ի ԱՃ, %	Վերաֆին. հոկոսադ ույք, %	Գնաճ, %	Գործազր-ություն, %	Ոետ. ցուջեի կակասորդ %	Ոետակա կարտք/ ՀՆԱ, %	Ընթացի ի հաշիվ/ ՀՆԱ, %	ԱՄՆ գոլարի իոխարժե ք
Թուրքիա	58	.30	.00	0.23	0.90	1.10	8.30	3.80	.09
Իրան	93 2015թ.	.60	8.00	.90	1.70	2.10	7.7	.30	2000
Ադրբեջան	8	.10	1.00	3,4	.10	1.60	2.80	.60	.70
Վրաստան	5,1		.25		1.80	4.00	3.90	13.30	.40

Հայաստան	1,6	7,5	5.00		7.80	4.78	52.60	3.40	481

Ամփոփում կամ մի քանի զուգահեռներ մեր հարևանների հետ

Հայաստանում, ինչպես նշեցինք, ըստ ԱՎԾ-ի գրանցվել է ՀՆԱ-ի 7,5% իրական աճ, իսկ տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 7,7%: Մեր տնտեսության 5 ոլորտներից 4-ում արձանագրվել է աճ, իսկ գյուղատնտեսությունում գրանցվել է 3% անկում: Դրական է արտահանման ծավալների նշանակալի աճը 25,2%-ով, որտեղ արտահանվել է 2,2 մլրդ. դոլարի արտադրանք: Ներմուծումը աճել է 27,8%-ով: Արտահանման աճին նպաստել են պատրաստի ապրանքները, հատկապես սննդի և գյուղատնտեսական արտադրանքները, ինչպես նաև հանքահումքային արտադրանքը՝ պայմանավորված պղնձի գների աճով (2016-17թթ.-ին պղնձի գները բարձրացել են 4400 դոլարից հասնելով 7100 մեկ տոննայի դիմաց): Սակայն արտահանման կառուցվածքում դեռևս դիվերսիֆիկացիան ցածր է:

-Հայաստանի և մեր բոլոր հարևանների մոտ նախորդ տարի արտահանումը բարձր աճ է գրանցել: Բացառությամբ Թուրքիայի, բոլոր երկրներում արտահանման աճը հիմնականում ունեցել է հումքային բնույթ՝ պայմանավորված մետաղների և նավթի գների աճով: Բոլոր երկրների տնտեսական աճին զգալիորեն նպաստել է նաև արտահանման աճը:

-Նախորդ տարի մեր բոլոր հարևանների տնտեսություններին բնորոշ էր բարձր գնաճը՝ այն բարձր էր Ադրբեջանում՝ 13,4%,

Թուրքիայում՝ 10,23%, Իրանում՝ 9,45%, ինչպես նաև Վրաստանում՝ 6%: Հայայստանում ըստ պաշտոնական վիճակագրության գնաճը բավականին ցածր է եղել: Այսինքն, մեր հարևան երկրները գնաճի արդյունավետ կառավարման բարդություններ են ունեցել:

-Ազգային արժույթների փոխարժեքի կայուն պահպանման ջանքերը չեն հաջողվել Իրանում և Թուրքիայում, իսկ Ադրբեջանը մեծ ջանքերի և ֆինանսական ռեսուրսների հաշվին է կարողացել պահպանել մանաթի փոխարժեքը: Թուրքիայում սակայն լիրայի արժեզրկումը զգալիորեն նպաստել է արտահանման աճին:

-Ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի համար կարևոր գործոն է հանդիսացել դրամական փոխանցումների ներհոսքի ավելացումը, հատկապես Ռուսաստանից, որն էլ տնտեսական աճի վրա էական նպաստ է ունեցել: Երկու երկրների համար էլ արտահանման և տրանսֆերտների աճը նպաստել է սպառման ծավալների ավելացմանը, որի մասին է հուշում ինչպես առևտրի ծավալների, այնպես էլ ներմուծման ծավալների աճը:

-Հայաստանում անցած տարի բնակչության եկամուտների իրական աճ ներքին աղբյուրների հաշվին չի եղել, այսինքն կենսաթոշակների և պետական համակարգի աշխատավարձերի էական բարձրացում տեղի չի ունեցել: Անվանական աշխատավարձը բարձրացել է Ադրբեջանում, որը սակայն գնաճի բարձր տեմպերի պատճառով եկամուտների իրական աճ չի գրանցել: Նմանատիպ իրավիճակ է նաև Թուրքիայում:

-Վրաստանի և Թուրքիայի համար կարևորվել է զբոսաշրջության ճյուղը, որն էլ էական ազդեցություն է ունեցել այդ երկրների ՀՆԱ-ի աճի վրա: Մեզ մոտ նույնպես զգալի աճ կա այս ոլորտում և տնտեսական ակտիվության վրա որոշակի նպաստ է ունեցել:

-Վերաֆինանսավորման տոկոսադրույքը ամենաբարձրը Իրանում և Ադրբեջանում է, իսկ ամենացածրը մեզ մոտ է, սակայն այս հանգամանքը էական դեր չի խաղացել տնտեսությանը էժան վարկերով սնուցելու համար: Մեզ մոտ վարկավորման այլ արդյունավետ մեխանիզմներ են պետք տնտեսության ակտիվացման համար:

-Հայաստանում տնտեսական աճի 7,7% ցուցանիշը չի նպաստել աղքատության և գործազրկության ծավալների կրճատման կամ բնակչության բարեկեցիկության վրա: Այսպես, գործազրկության տարեկան միջին մակարդակը 2017թ.-ին կազմել է 17,8%՝ 2016 թ.-նի 18%-ի դիմաց, այսինքն այն նվազել է ընդամենը 0,2%-ով, իսկ աղքատության 30% մակարդակը դժվար թե էական չափով նվազած լինի:

-Ընթացիկ տարում Հայաստանում բարձր տնտեսական աճի համար անհրաժեշտ են, որ շարունակվեն այն դրական միտումները, որոնք եղել են համաշխարհային տնտեսությունում: Խոսքը մետաղների բարձր գների, Ռուսաստանի տնտեսության կայունության, այնպես էլ երկրի ներսում իրականացվող տնտեսական արդյունավետ քաղաքականության մասին է: Սակայն Ռուսաստանի շուրջ ընթացող բացասական գործընթացները հուշում են, որ Ռուսաստանին դժվարին ժամանակներ են սպասվում, որոնք անշուշտ բացասական կազդեն նաև մեր տնտեսության վրա:

Որպես ամփոփում նշենք, որ ի տարբերություն մյուս հարևանների հիմնախնդիրների, մեր հիմնախնդիրները ավելի վտանգավոր և խոցելի են: Դրանք են արտագաղթը և բնակչության ծերացումը, որոնք ոչ միայն ժողովրդագրական, այլ նաև սոցիալ-տնտեսական և ազգային անվտանգության խնդիրներ են, ինչպես նաև աղքատության և գործազրկության բարձր մակարդակները, եկամուտների կրճատումը, կապիտալի արտահոսքը, պարտքի աճը (պետական, մասնավոր

բիզնեսի և տնային տնտեսությունների), ներդրումների կրճատումը, սոցիալական բևեռացվածությունը, տարածաշրջանների անհավասարաչափ զարգացումը, խոշոր ենթակառուցվածքային նախագծերի ձգձգումը և վարկային միջոցների վատնումը, տնտեսության որոշ ճյուղերի գերկենտրոնացումը, կոռումպացվածութան բարձր մակարդակը և մենաշնորհների առկայությունը:

Տնտեսական հիմնախնդիրները միշտ էլ եղել են և բնորոշ են բոլոր ազգային տնտեսություններին: Պետք է հետևել և սթափ գնահատել, թե տնտեսական գործընթացների միտումները ինչպիսին են աշխարհում և մեր հարևան երկրներում, ինչպես են հիմնախնդիրները հաղթահարվում, վերլուծել դրանք և խելամիտ տնտեսական հարաբերություններ վարել մեր հարևանների հետ:

Սարգիս Մանուկյան